**EmployeeProtect.am առցանց հարթակի գաղտնիության քաղաքականություն**

Սույն գաղտնիության քաղաքականությունը նախատեսված է EmployeeProtect.am առցանց հարթակում (այսուհետ՝ Հարթակ) ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից (այսուհետ՝ Տեսչական մարմին) Հարթակից օգտվող այն անձանց համար, ովքեր հետաքրքրված են անձնական տվյալների օգտագործմամբ: Գաղտնիության քաղաքականությունը) կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ, և օգտագործվող բոլոր եզրույթներն ունեն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված իմաստը:

Օրենքի համաձայն անձնական տվյալ է համարվում ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը.

Հարթակում Ձեր անձնական տվյալների օգտագործման, պաշտպանության և այլ կերպ պահպանման մեթոդներին ծանոթանալու համար խնդրում ենք ուշադիր ծանոթանալ սույն գաղտնիության քաղաքականությանը (այսուհետ՝ Քաղաքականություն):

## *1. Տեղեկությունների հավաքագրման միջոցները Հարթակում*

Հարթակը Ձեզանից տեղեկություններ հավաքագրում է հետևյալ միջոցներով.

- երբ Դուք հայտ եք ներկայացնում Հարթակում՝ ընտրելով ոչ անանուն մնալու տարբերակը,
- լրացնում եք «Հետադարձ կապ» ձևը,
- այցելում եք Հարթակ (այս դեպքում տեղեկատվությունը պահպանվում է «Cookies» բաժնում):

Նշված միջոցներով ստացված ցանկացած տեղեկատվություն համարվում է անձնական տեղեկություն/տվյալ:

## *2. Հավաքագրվող տեղեկությունների տեսակները*

Սույն Քաղաքականությամբ սահմանված կարգով և նպատակներով կարող են հավաքվել ֆիզիկական անձի հետևյալ անձնական տվյալները՝

- անուն, ազգանուն,
- ծննդյան ամսաթիվ,

- կոնտակտային տվյալներ (հասցե, էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար և այլն),
- և այլն (կախված այն հանգամանքից, թե հայտ ներկայացնելու հայտատուն ինչպիսի տեղեկություններ կհայտնի կամ ինչպիսի տեղեկություններ պարզ կդառնան հայտատուի ներկայացրած փաստաթղթերից)։

### *3. Անձնական տվյալների օգտագործումը*

Հարթակը ավտոմատացված, տեխնիկական ցանկացած միջոցներ կիրառելու կամ առանց դրանց կարող է իրականացնել անձնական տվյալների մշակում (այդ թվում՝ հավաքագրում, ամրագրում, մուտքագրում, համակարգում, կազմակերպում, պահպանություն, օգտագործում, վերափոխում, փոփոխություն, ուղղում, վերականգնում, փոխանցում, ոչնչացում կամ այլ գործողությունների կատարում) հետևյալ նպատակներով՝

- տրամադրել Հարթակի ծառայությունները հայտատուներին, այդ թվում՝ միջոցներ ձեռնարկել հայտում ներկայացված հարցերի քննության և լուծման նպատակով
- տրամադրել Հարթակի ծառայությունները այցելուներին.
- տրամադրել տեղեկատվություն, այդ թվում՝ նորություններ գործունեության վերաբերյալ, տեղեկություններ միջոցառումների մասին, մամլո հաղորդագրություններ, խորհուրդներ և այլ օգտակար տեղեկատվություն,
- հաղորդակցվել և համագործակցել հայտատուների և այցելուների հետ, այդ թվում՝ արձագանքել նրանց հարցումներին, տրամադրել ծանուցումներ և թարմացումներ հայտի վերաբերյալ,
- ներքին նպատակների համար, ինչպիսիք են աուդիտը, տվյալների վերլուծությունը և ուսումնասիրությունը, որոնք կօգնեն մատուցել և բարելավել ծառայությունները,
- վերահսկել և վերլուծել ծառայությունների հետ կապված միտումները, օգտագործումը և կատարված գործողությունները,
- կատարելագործել ծառայությունները և հայտատուների ու այցելուների հետ հաղորդակցությունը։

Հայտատուն և այցելուն իրավասու են տվյալների պաշտպանության տեղական իրավասու մարմնին բողոք ներկայացնել, եթե իր գաղտնիության իրավունքները խախտվել են, կամ եթե նա տուժել է անձնական տվյալների անօրինական մշակման արդյունքում:

### *4. Անձնական տվյալների պաշտպանությունը*

Ձեր անձնական տվյալները գտնվում են պաշտպանված ցանցերում և հասանելի են միայն սահմանափակ թվով մարդկանց (Տեսչական մարմնի աշխատողներին), ովքեր նշված համակարգերի հասանելիության հատուկ իրավունքներ ունեն և պարտավոր են պահպանել նշված տեղեկությունների գաղտնիությունը:

## *5. Անձնական տվյալների մշակման պայմանները*

Տեսչական մարմինը կվերամշակի վերոհիշյալ անձնական տվյալները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տեսչական մարմինը պահպանում է անձնական տվյալները՝

- այնքան ժամանակ, քանի դեռ անհրաժեշտ է հայտատուին և այցելուին տրամադրել Հարթակի ծառայություններից օգտվելու հնարավորություն,
- երբ հայտատուն և այցելուն Հարթակի միջոցով հարցով կամ պահանջով դիմել է Տեսչական մարմնին. այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է հարցին կամ պահանջին արձագանքելու համար,
- Հայտատուի և այցելուի անձնական տվյալները պարունակող փաստաթղթերի պահպանման (արխիվացման ժամանակահատված) ընթացքում,
- ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված ցանկացած այլ ժամանակահատվածով:

## *6. Անձնական տվյալների փոխանցում*

Տեսչական մարմինը կարող է հայտատուի կամ այցելուի անձնական տվյալները փոխանցել երրորդ անձանց (այդ թվում իրավասու մարմիններին):

Հարթակի հոսթինգն իրականացնող Տեսչական մարմնի գործընկերները և այլ անձինք, ովքեր աջակցում են Հարթակի շահագործման, գործունեության իրականացման, օգտագործողների սպասարկման հարցում, երրորդ կողմ չեն համարվում՝ պայմանով, որ նշված անձինք պարտավորվում են պահպանել այդ տվյալների գաղտնիությունը:

Տեսչական մարմինը կարող է հրապարակել տեղեկությունները օրենսդրությամբ սահմանված դեպքերում, կայքի քաղաքականությունների կիրառման, Հարթակի կամ այլ անձանց իրավունքների, գույքի կամ անվտանգության պահպանման նկատառումներից ելնելով:

## *7. Երրորդ կողմի հղումներ*

Տեսչական մարմինը Հարթակում չի ներառում կամ առաջարկում երրորդ անձանց ծառայություններ:

### *8. Cookie ֆայլեր*

Տեսչական մարմինը օգտագործում է cookie ֆայլերը, որոնք որևէ կայք կամ ծառայություն մատուցող ուղարկում է Ձեր համակարգչի կոշտ սկավառակին վեբ-բրաուզերի միջոցով (Ձեր թույլտվության դեպքում), և որոնք թույլ են տալիս տվյալ կայքի կամ ծառայություն մատուցողի համակարգերին ճանաչել Ձեր բրաուզերը և որսալ ու հիշել որոշակի տեղեկատվություն: Դրանք օգնում են Տեսչական մարմնին հասկանալ Ձեր նախընտրությունները՝ հիմնվելով կայքում իրականացված Ձեր նախկին կամ ընթացիկ գործողությունների վրա, ինչն իր հերթին հնարավորություն է տալիս բարելավել Ձեզ մատուցվող ծառայությունների որակը: Տեսչական մարմինը օգտագործում է «Cookie»-ները նաև Հարթակի գործածության և այցելությունների քանակի վերաբերյալ տվյալների ամբողջացման նպատակով, ինչն օգնում է բարելավել կայքը և նոր գործիքներ մշակել:

### *9. Քաղաքականության փոփոխությունները և լրացումները*

Տեսչական մարմինը իրավունք ունի ցանկացած ժամանակ առանց նախապես տեղեկացնելու միակողմանիորեն փոփոխել և լրացնել գաղտնիության քաղաքականությունը:

### *10. Հետադարձ կապ*

Քաղաքականության հետ կապված ցանկացած հարցի դեպքում խնդրում ենք դիմել Տեսչական մարմին ստորև ներկայացված հասցեով.

Հեռախոս

Ընդունարան՝(+374 10) 650 553

Իրազեկման բաժին՝(+374 10) 650 305

Թեժ գիծ՝ 81-07

Էլ. փոստ՝ info@hlib.am

Աշխատանքային ժամեր՝ երկուշաբթի - ուրբաթ, 9:00-18:00